Կարծիք

Դավիթ Կարապետյանի «Վախուշտի Բագրատիոնիի «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատությունը որպես հայոց պատմության սկզբնաղբյուր» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության մասին

Հայաստանին հարակից երկրների պատմության աղբյուրների ուսումնասիրությունը հայագիտության մեջ մշտապես կարևորվել է, և կարծում ենք ավելորդ չէ մեկ անգամ ևս շեշտելը վրացական աղբյուրների հետազոտության արդիականությունն ու անհրաժեշտությունը հայոց պատմության զանազան հարցերի լուսաբանման համար: Վրացական աղբյուրների դերը էլ ավելի մեծ է 18-րդ դարի հայոց պատմության խնդիրների ուսումնասիրության գործում, երբ աստիճանաբար Կովկասում ուժեղանալով՝ Վրաց թագավորությունը ջանում էր իր գերիշխանության տակ առնել հարևան խանությունները, որոնց տարածքների մեջ էին ընդգրկված Արևելյան Հայաստանի նահանգները: Ատենախոսության թեման նվիրված է 18-րդ դարի վրաց պատմագրության ականավոր ներկայացուցչի՝ վրաց արքայական ընտանիքի անդամ Վախուշտիի պատմաաշխարհագրական աշխատության աղբյուրագիտական քննությանն ու արժևորմանը հայագիտության տեսանկյունից:

Վախուշտիի աշխատության որոշ մասեր, իհարկե, թարգմանվել ու ներկայացվել էին հայագետներին դեռևս Մելիքսեթ-Բեկի հրատարակած «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» շարքի երրորդ հատորում, սակայն թե՛ այնտեղ ընդգրկված մասերը, և թե՛ Վախուշտիի այլ հաղորդումները կարոտ էին աղբյուրագիտական վերլուծության, որն էլ ատենախոսը կատարել է սույն աշխատանքում:

Աշխատանքն ունի տրամաբանական կուռ կառուցվածք: Առաջին գլխում քննվում են Վախուշտիի կենսագրության ու գործունեության, նաև մատենագրական ժառանգության հարցերը: Առաջին գլխի երրորդ բաժնում մանրակրկիտ

հետազոտվում են Վախուշտիի աշխատության աղբյուրները և արժևորվում նրա տեղը իր ժամանակաշրջանի վրաց այլ պատմագիրների կողքին: Երկրորդ գլխում հանգամանալից ուսումնասիրվում են վրաց հեղինակի հաղորդած տեղեկությունները Իրանի Սեֆյան պետության անկման ու Վրաստանի հետագա պատմության իրադարձությունների մասին, որոնք կապվում են Կովկասում Օսմանյան տիրապետության հաստատման և Նադիր շահի նվաճողական քաղաքականության հետ: Ատենախոսության մեջ մեծ ուշադրություն է դարձվել ոչ միայն 18-րդ դարի, այլև Վախուշտիի աշխատության 15-17 –րդ դարերի հայոց պատմությանը վերաբերող հաղորդումներին, որոնք թեև հեղինակը քաղել է այլ աղբյուրներից, սակայն բովանդակում են պատմական եզակի ու արժեքավոր տեղեկություններ:

Ատենախոսը վրաց պատմագրի Հայաստանին ու հայերին վերաբերող հաղորդումների վերլուծությունը սկսում է 15-րդ դարից՝ անդրադառնալով Ակ Կոյունլու Ուզուն Հասանի ու վրաց թագավորների միջև հայկական շրջանների շուրջ տեղի ունեցած բախումներին և իրադարձությունների ընթացքին:

Հեղինակը հաջորդաբար քննում է Կովկասի և հատկապես Վրաստանի շուրջ Սեֆյան պետության և Օսմանյան կայսրության միջև զարգացող հակամարտության ու դեպքերի ընթացքին վերաբերող Վախուշտիի հաղորդումները: Ատենախոսը ուշագրավ դիտարկումներ է կատարում դրանց հավաստիության ու պատմական արժեքի վերաբերյալ, լրացնում և ճշգրտում դրանք զուգահեռ այլ աղբյուրների տվյալներով: Նա իրավացի կերպով բարձր է գնահատում Վախուշտիի հաղորդումները թուրք-իրանական հակամարտության, շահ Աբբաս Ա-ի արշավանքների վերաբերյալ:

Ատենախոսության երրորդ գլխում հետազոտվում են հայկական շրջանների պատմական աշխարհագրությանն ու սոցիալ-տնտեսական հարցերին վերաբերող տվյալները Վախուշտիի աշխատությունում: Ատենախոսը մանրամասն վերլուծության է ենթարկել Վախուշտիի աշխատության պատմաաշխարհագրական տեղեկությունները: Աշխատանքում զգալի տեղ է հատկացված Թբիլիսիի հայության պատմությանը՝ հիմնավորելու համար Վախուշտիի հաղորդումը այնտեղ նրանց մեծամասնություն լինելու մասին, ապա հենվելով փաստական տվյալների վրա՝

եզրակացնում, որ Թբիլիսին ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայության համախմբման կարևոր կենտրոն էր, որտեղ հայ ժողովրդի մի ստվար հատված հաստատվելով ավելի վաղ ժամանակափուլերում կարողացել էր կարևոր տեղ գրավել քաղաքի կառավարման մեջ:

Գովելի է ատենախոսի քննադատական մոտեցումը ուսումնասիրվող սկզբնաղբյուրի, զուգահեռ օգտագործված այլ աղբյուրների ոչ արժանահավատ տեղեկությունների նկատմամբ, որոնք նա մերժում է իր աշխատանքում: Հեղինակը փորձում է նաև հիմնավոր կերպով հերքել վրաց պատմաբանների կողմնակալ մոտեցումները վրաց պատմագիրների հայությանը վերաբերող տվյալների նկատմամբ և դրանց ոչ ճշմարտացի մեկնաբանությունները:

Գնահատելով ատենախոսի կատարած մեծ աշխատանքը վրաց սկզբնաղբյուրի հայագիտական տեսանկյունից ուսումնասիրելու ուղղությամբ՝ ունենք հետևյալ դիտողությունները՝

Մեծ թիվ են կազմում վրիպակները, որոնց մեջ կարելի է նշել առաջին գլխի վերնագրի բացակայությունը բովանդակության ցանկում, էջ 98-ում հետևյալ նախադասությունը «XVIII դարի վերջին տասնամյակներին շարունակվում էր Սեֆյան Իրանի թուլացումը»: Պետք է լինի «XVII դարի վերջին տասնամյակներ»:

Էջ 114-ում Բերուջ տեղանվան փոխարեն, որը նույն ձևով նշված է նաև տողատակում, պետք է լինի Բերդուջ:

Երևի թե վրիպակների շարքից է նաև էջ 25-ի հղում 92-ը, որտեղ նշված է միայն ամսագրի անունը և մյուս տվալները, իսկ հոդվածի վերնագիրը և հեղինակի անունը բացակայում են:

- Անհասկանալի է Առաքել Դավրիժեցու երկից հեղինակի հղումների հարցը. էջ 75-ում նա հղում է նրա 1884 թվականի հրատարակությունը, իսկ գրականության ցանկում վերջին՝ 1990 թվականի հրատարակությունը Լ. Խանլարյանի աշխատասիրությամբ:

- Էջ 81-ում խոսում է Գեորգի թագավորի մահվան, ապա Լուարսաբի թագավորության, ինչպես նաև սպանության (էջ 85) մասին, առանց թվականների

նշման, որոնց առկայությունը, իհարկե, հստակություն կմտցներ ատենախոսության շարադրանքում:

- Ատենախոսության մեջ հեղինակը 3.3 ենթավերնագրի տակ խոսելով Վրաստանում հայերի տեղաբաշխման վերաբերյալ Վախուշտիի հաղորդումների մասին՝ անդրադառնում է օսմանյան իշխանությունների կազմած Թիֆլիսի վիլայեթի 1728 թ. աշխարհագիր-ցուցակին և նշում, որ «դրանք ամբողջովին չեն արտացոլում մինչև թուրքական ներխուժումը եղած ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատկերը» (էջ 132): Դա իհարկե այդպես է, սակայն օրինակ Աշոցքի տարածաշրջանի, ինչպես նաև Վրաստանի այլ հայաբնակ վայրերի ու շրջանների մասին Վախուշտիի հիշատակությունների քննության մեջ կարծում ենք ճիշտ կլիներ կատարել այս երկու սկզբնաղբյուրների տվյալների պատմահամեմատական վերլուծությունն ու համադրումը, որը չկա աշխատանքում: Նշենք, որ բացի վրացի հետազոտողների կողմից Թիֆլիսի վիլայեթի հիշյալ հրատարակությունից, այդ վիլայեթի մեջ մտնող Աշոցք, Տաշիր, Փամբակ շրջանների մասին տվյալները հետազոտվել են նաև 2018 թ. Գեորգի Միրզաբեկյանի պաշտպանած ատենախոսության երրորդ գլխում, որտեղ ի դեպ օգտագործված է նաև Վախուշտիի կազմած ատլասը:

Ատենախոսության մեջ կատարված է արժեքավոր աշխատանք վրաց սկզբնաղբյուրի ուսումնասիրության և հայոց պատմությանն առնչվող նրա տեղեկությունների աղբյուրագիտական քննության ու արժեվորման ուղղությամբ: Այն լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտաշխատող պ.գ.դ. Ք. Կոստիկյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող պ.գ.դ. Ք. Կոստիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Վ. Թորոսյան

28.08.2020թ